

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ ԿԱՆԽԻԿ ԵՎ ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արշակ Հարությունի Վարժապետյան

Հոդվածը ստացվել է՝ 14.02.24, ուղարկվել է գրախոսման՝ 10.04.24, երաշխավորվել է տպագրության՝ 06.06.24

Ներածություն: Զարգացած երկրներում առավել խրախուսական է գործարքների անկանխիկ եղանակով իրականացումը: Այն պայմանավորված է փողի վերահսկողության հետ, ինչը հնարավորություն է տալիս վերջինիս վերաբերյալ որոշումներ կայացնողներն առավել ճշգրիտ ու արագ արձագանքեն հնարավոր ռիսկերին և գնահատեն ապագա սպասումները: Միջազգային պրակտիկայում մեծ կիրառություն են գտել վճարային քարտերով գործարքների իրականացումը:

Հայաստանում վճարային քարտերի կիրառումը մեծ զարգացում է ապրել վերջին տարիներին, հատկապես օրենսդրական կարգավորումների ու խստագույնների արդյունքում: Այնուամենայնիվ դրան համահունչ և խորքային հետազոտությունները մնում են սակավ կամ լավագույն դեպքում բանկերի ու Կենտրոնական բանկի կողմից իրականացվող ուսումնասիրություններում՝ իրենց իսկ օգտագործման համար: Այս համատեքստում հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ կանխիկ գործարքների դինամիկան և ազդեցությունն անկանխիկ գործարքների զարգացման համատեքստում: Թեման **արդիական է**. Հայաստանում, ուստի խնդիր է դրվել ուսումնասիրել և ցույց տալ կանխիկ գործառնությունների սահմանափակման արդյունքում անկանխիկ գործառնությունների զարգացման դինամիկան և անկանխիկ գործառնությունների հակադարձ ազդեցությունը կանխիկ գործառնությունների սինթեզային աճի վրա: Անկանխիկ վճարումների գործիքակազմի արդի զարգացման համատեքստում պայմանավորվում է ուսումնասիրվող թեմայի **արդիականությունը**:

Գրականության վերլուծություն: Վերջին մեկ-երկու տարիների ընթացքում նկատելի են ուսումնասիրությունները վճարահաշվարկային համակարգերի ու դրանց իրականացված զանազան գործառնությունների վերաբերյալ նաև Հայաստանում: Ինչպես գիտական հոդվածների, այնպես էլ ատենախոսության տեսքով աշխատանքներում: Մասնավորապես՝ «Անկանխիկ հաշվարկների արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» Լ.Հ. Գասպարյանի ատենախոսությունը, հիմնախնդիրը քննարկվում է, վերլուծման նոր մեթոդների գնահատման առումով¹, Ա.Տեփոյանը, իր անդրադարձել է վճարա-

¹ Լ. Հ. Գասպարյան, Ատենախոսության սեղմագիր, «Անկանխիկ հաշվարկների արդյունավետության բարձրացման, Հայ-Ռուսական Համալսարան, Երևան 2019թ., էջ 3-21, <https://www.bok.am/sites/default/files/2021-03/%D5%8D%D5%A5%D5%B2%D5%B4%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%2012.12.2019%20%281%29.pdf> (Վերջին մուտք 03.04.2024թ.)

հաշվարկային համակարգերի դերին¹: Իսկ տնտեսության զարգացումը անկանխիկ փողի ռացիոնալ կառավարմամբ² և թոքենացված (թվայնացված) վճարային քարտերով իրականացված վճարումներին և դրանց զարգացմանը³ Դ. Հարությունյանը և Ա. Վարժապետյանը: Միջազգային հրապարակումներից կարելի է առանձնացնել N. MacDonald-ի և B. Evans-ի ուսումնասիրությունը վճարային քարտերից Cash-Back-երի վերաբերյալ «A theoretical examination of cash-back credit cards and their effect on consumer spending»⁴ հոդվածի համատեքստում կարող ենք ասել, որ Հայաստանում Cash-Back-երի պրակտիկան նոր է փորձում զարգանալ: Միջազգային փորձի ուսումնասիրության աստիճանից նշենք նաև «Անկանխիկ վճարային գործարարների ազդեցության վերլուծությունն ինդոնեզիայում M1 փողի զանգվածի վրա»⁵, որտեղ անդրադարձ է կատարվել անկանխիկ գործարքների ազդեցությանը դրամավարկային քաղաքականության արդյունավետության և ֆինանսական կայունության հարցերին և այլն: Հայաստանում փողի վերաբերյալ ուսումնասիրություններ են իրականացրել Վ.Օրդուխանյան «Փողի շուկա: Բանկային համակարգ և դրամավարկային քաղաքականություն», Լ. Բադանյանը «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», Հ.Բ.Խուրշուդյանը «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» աշխատություններում, որոնցում թուուցիկ անդրադարձ են կատարվել մեր կողմից ուսումնասիրվող հարցերին:

Մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել ՀՀ ԿԲ հրապարակված վիճակագրական հաշվետվությունները, WorldBank-ի տվյալների բանկը, ՀՀ գործող օրենսդրական ակտերն ու նորմերը, ինտերնետային կայքերը, հայրենական ու արտասահմանյան հեղինակների աշխատություններն ու հոդվածները և այլն: Հետազոտության ընթացքում օգտագործվել են վիճակագրական ու տրամաբանական, աղյուսակա-

¹ Ա. Տեփոյան, «Վճարահաշվարկային կազմակերպությունների դերը ՀՀ տնտեսությունում», Բանբեր ԵՊՀ. Սոցիոլոգի. տնտեսագիտություն, Երևան 2019, No2 (29) էջ 67- 75, http://www.old.ysu.am/files/07A_Tepoyan.pdf (Վերջին մուտք 03.04.2024թ.):

² D.V. Harutyunyan & A.H.Varzhapetyan, “The economy development with rational money management at the expense of cash payments”, Alternativ Quarterly Academic Journal #1, Yerevan 2022, pp. 141-149, https://www.researchgate.net/publication/361786945_THE_ECONOMY_DEVELOPMENT_WITH_RATIONAL_MONEY_MANAGEMENT_AT_THE_EXPENSE_OF_CASH_PAYMENTS (Վերջին մուտք 03.04.2024թ.):

³ Դ.Վ. Հարությունյան և Ա. Հ. Վարժապետյան, «Թոքենացված վճարամիջոցներով գործառնություններն ու ազդեցությունը դրամավարկային քաղաքականության վրա», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում գիտական հոդվածների ժողովածու- 2023, No1», Երևան 2023թ., էջ 34-46, <https://doi.org/10.54503/1829-4324.2023.1-34> (Վերջին մուտք 03.04.2024թ.):

⁴ Noah MacDonalda and Brent Evans, A theoretical examination of cash-back credit cards and their effect on consumer spending, Financial Services Review 28, USA 2023, pp. 223–242, <https://openjournals.libs.uga.edu/fsr/article/view/3428/3051> (Last entered: 03.04.2024).

⁵ Novita Umairoh& Riko Setya Wijaya, International Journal of Multidisciplinary Research and Literature, Analysis of the effect of non-cash payment transactions on the money supply M1 in Indonesia, pp. 818-828, <https://ijomral.esc-id.org/index.php/home/article/view/174/185> (Last entered: 03.04.2024).

յին, հաշվարկային, համեմատական, անալիզի և սինթեզի, ինդուկցիայի և դեդուկցիայի, գիտական արստրահման, համակարգչային վերլուծությունների և այլ գործիքակազմեր:


Վերլուծություն: Վերջին ժամանակներում փողի ռացիոնալ կառավարումը աշխարհի շատ երկրիների համար դարձել է հայեցակարգային հիմնախնդիր: Տարբեր գիտնականների և միջազգային կառույցների կողմից ուսումնասիրության առանցքում են գտնվում ինչպես կանխիկ այնպես էլ անկանխիկ փողերը, որոնք անմիջական ազդեցություն են ունենում երկրի փողի զանգվածի վրա, հանգեցնելով տվյալ երկրի դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների փոփոխությանը:

Հայաստանում կանխիկ և անկանխիկ գործառնությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների մշակումն ու հրապարակումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից՝ հրապարակված «Վճարային քարտերով կատարված գործառնություններ» հաշվետվությունում: Դա նշանակում է, որ ցանկացած գործարք (առք ու վաճառք, պայմանագրային հարաբերություն և այլն) և/կամ վաստակած եկամուտ ստացվում ու իրականացվում է բանկային հաշվեհամարին փոխանցում կատարելու միջոցով: Իսկ վճարային քարտերը (ֆիզիկական, վիրտուալ, թոքենացված (թվայնացված)) դրանք բանկային հաշվեհամարներին համակցված գործիքներ են: Եթե դիտարկենք այն, որ փոխանցումներն իրականացվում են ոչ քարտային հաշվեհամարներին, ապա բնակչության գերակշիռ մասը դրանք օգտագործում է հաշվից քարտային հաշիվների փոխանցում կատարելուց հետո: Եվ վերջապես, հաշվի առնելով, որ ուսումնասիրվող երևույթի տնտեսագիտական մեկնաբանությունը բոլոր հավասար պայմաններում տրվում է ոչ բացարձակորեն, ինչպես մաթեմատիկայում, ուստի ուսումնասիրվող երևույթի վերաբերյալ արդյունքն արտապատկերելու համար ուսումնասիրության օբյեկտը սահմանել ենք վճարային քարտերով իրականացված կանխիկ և անկանխիկ գործառնությունները:

Դիտարկելով ՀՀ ԿԲ կողմից հրապարակված հաշվետվությունը, տեսնում ենք, որ 2023թ. համար առկա է միայն երեք եռամսյակային տվյալներ: Հետևապես հաշվարկները և համեմատական ցուցանիշները ընտրանքը եղել է յուրաքանչյուր տարվա 1-ին 9 ամիսների հաշվարկներով: Այսպիսով, կանխիկ և անկանխիկ գործառնությունները դիտարկելու համար, նախ հետազոտվել է, թե ՀՀ-ում վճարային քարտեր սպասարկող ապարատային մասն ինչ դինամիկա է ունեցել, որոնք ներառում ենք բանկոմատներ(ATM), POS և vPOS (վիրտուալ POS) տերմինալներ: Նշված դինամիկան ցուցադրված է «Աղյուսակ 1»-ում, իսկ գրաֆիկական պատկերը՝ «Գծապատկեր 1»-ում:

ՀՀ-ում բանկերի կողմից տեղադրված ATM, POS և vPOS տերմինալների քանակական փոփոխությունը¹

Անվանում	2020 III	2021 III	2022 III	2023 III	Տարբերություն	
					Բզձ.	Հարաբ.
ԱԳՄ	1,552	1,567	1,627	1,556	4	0.3%
POS	12,775	17,485	32,537	79,004	66,229	518.4%
vPOS	2,326	3,017	3,596	4,269	1,943	83.5%



Գծապատկեր 1. ՀՀ-ում բանկերի կողմից տեղադրված ATM, POS և vPOS տերմինալների քանակական փոփոխության դինամիկան²

Ներկայացված աղյուսակի ցուցանիշներից երևում է, որ «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի³ ընդունումը դրականորեն է անդրադարձել անկանխիկ սպասարկում իրականացնող սարքավորումների քանակական ցուցանիշների վրա: Նշված արդյունքային ցուցանիշն ուսումնասիրելով կարելի է մեկնաբանել, որ կանխիկի ապահովումն իրականացնող սարքավորումները՝ բանկոմատները, հիմնականում կա՛մ չեն տեղադրվել, կա՛մ գուցե վերատեղակայվել են՝ կախված գործարքների ակտիվության վարքից: Ինչ վերաբերում է անկանխիկ սպասարկումն իրականացնող սարքավորումներին (POS և vPOS տերմինալներ) դրանց զարգացումը կտրուկ աճել է, քանի որ իրավակարգավորումը համապատասխան կերպով է անդրադարձել տնտեսվարողների մեծամասնության վրա⁴:

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, Վիճակագրություն և հաշվետվություններ, ՀՀ վճարային ենթակառուցվածքը, <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatereports.aspx> (Վերջին մուտք 03.04.2024թ.)

² Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից «Աղյուսակ 1»-ի ցուցանիշների հիման վրա:

³ ՀՀ Օրենք Անկանխիկ գործառնությունների մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=160074> (Վերջին մուտք 03.04.2024թ.)


⁴ ՀՀ Օրենք Անկանխիկ գործառնությունների մասին, Հոդված 9, Պարագրաֆ 1, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=160074> (Վերջին մուտք 03.04.2024թ.)

Վերը կատարված արդյունքներից ելնելով ուսումնասիրվել է վճարային քարտերով գործարքների իրականացումը կանխիկի և անկանխիկի սպասարկման սարքավորումներում՝ ըստ ծավալների (տես՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ATM և POS/vPOS տերմինալներով վճարային քարտերով իրականացված գործարքների ծավալը/մլն. ՀՀ դրամ/¹

Անվանում	2020թ. 1-ին 9 ամիս	2021թ. 1-ին 9 ամիս	2022թ. 1-ին 9 ամիս	2023թ. 1-ին 9 ամիս	Տարբերություն	
					Բզձ.	Հարաբ.
ATM	1,211,121	1,446,994	1,632,981	2,007,540	796,419	66%
F-POS	68,206	112,161	205,685	480,359	412,153	604%
vPOS	46,929	81,767	99,346	285,366	238,437	508%



Գծապատկեր 2. ATM և POS/vPOS տերմինալներով վճարային քարտերով իրականացված գործարքների ծավալի փոփոխության դինամիկան²

Աղյուսակ 2-ի արդյունքները ցույց են տալիս, որ POS և vPOS տերմինալներով իրականացված գործարքները գրեթե համահավասար են աճել՝ 500-600 տոկոսով, իսկ բանկոմատներով գործարքները 66%-ով: Այսինքն, եթե դիտարկենք, որ ըստ «Աղյուսակ 1»-ի տվյալների բանկոմատների քանակական ծավալն աճել է 2020-2023թթ.-ում 4 հատով, իսկ գործարքների ծավալը 66%-ով, ապա կարող ենք եզրահանգել, որ այն դրամական ծավալը, որոնք բնակչության մոտ իրականացվում էր մեկը մյուսին կանխիկ փողով վճարելու կամ փոխանակելու միջոցով, ներկայում այն անկանխիկ եղանակով է ստացվում, եթե ոչ լրիվությամբ, ապա մի

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով ՀՀ ԿԲ պաշտոնական կայք էջ, Վիճակագրություն և հաշվետվություններ, ՀՀ վճարային ենթակառուցվածք, <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx> (Վերջին մուտք 03.04.2024թ.)

² Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից «Աղյուսակ 2»-ի ցուցանիշների հիման վրա:

մասը գոնե կանխիկացվում է: Կարելի է եզրակացնել, որ կանխիկի ծավալը դեռևս մնում է պահանջված բնակչության մոտ:

Այս համատեքստում, հասկանալու համար արդյո՞ք բանկոմատները, որպես պահանջված սարքավորումներ, միննույն պահանջարկն ունեն նաև միջազգային պրակտիկայում, ուսումնասիրվել է Համաշխարհային բանկի տվյալների բազայում առկա յուրաքանչյուր չափահաս 100,000 մարդուն բաժին ընկնող բանկոմատների քանակական ցուցանիշը¹ (տես Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Համաշխարհային բանկի տվյալների բազայով և Open Banking կիրառող երկրների ATM ցուցանիշը 100,000 չափահաս մարդու հաշվարկով²


Անուն	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Հայաստան	54	59	61	61	64	64	66	66	67
Հնդկաստան	13	18	20	21	22	22	21	22	21
Լատինական Ամերիկա և Կարիբյան կղզիներ	40	40	41	41	41	41	42	42	43
Հունկոնգի ՀՎՇ, Չինաստան	50	50	49	51	50	52	53	52	51
Իսրայել		123	102	111	121	128	133	133	131
Նոր Զելանդիա	72	71	69	66	66	64	63	54	54
Մինգապուր	58	58	58	56	63	65	59	54	54
Ուկրաինա	104	95	87	89	98	97	96	94	91
Բրազիլիա	118	118	115	112	108	107	103	97	94
Վրաստան	68	71	70	74	76	78	85	91	95
Մեծ Բրիտանիա	129	130	131	130	128	115	110	99	96
Ճապոնիա	128	128	128	128	127	127	124	121	117
Ավստրալիա	161	165	164	168	160	146	137	130	124
Կանադա	221	222	221	224	228	220	214	210	212
Կորեա	289	289	289	289	289	289	289	289	289

Կատարված ընտրանքով, ուսումնասիրելով աղյուսակում տեղ գտած ցուցանիշները, կարելի է ասել, որ այնպիսի երկրներն ինչպիսիք են օրինակ Իսրայելը և Ուկրաինան ցուցանիշով Հայաստանը բավականին հետ է, սակայն հավասարագոր է Վրաստանին: Այնուամենայնիվ, դիտարկելով «Աղյուսակ 3»-ը կարելի է փաստել, որ զարգացած երկրներում յուրաքանչյուր 100,000 չափահաս մարդու հաշվով առկա քանակները բարձր են: Ինչը վկայում է նույնիսկ անկանխիկ երկրի պարագայում բանկոմատների պահանջվածությունը: Նշված հանգամանքը հաշվի առնելով, Աղյուսակ 3-ի ցուցանիշների հիման վրա կառուցված աղյու-


¹ World bank official website, World Development Indicators, Automated teller machines (ATMs) (per 100,000 adults), <https://databank.worldbank.org/reports.aspx?source=2&series=FB.ATM.TOTL.P5&country=y> (Last entered: 03.04.2024):

² Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հիմք ընդունելով World bank-ի World Development Indicators ցուցանիշները՝ <https://databank.worldbank.org/reports.aspx?source=2&series=FB.ATM.TOTL.P5&country=y> (Վերջին մուտք 03.04.2024թ.)

սակի օգնությամբ առավել պատկերավոր ցուցադրելու համար կազմվել է ստորև առկա երկու գծապատկերները ըստ ընտրված ժամանակային շարքերի: «Գծապատկեր 3»-ը ցուցադրում է միայն 2013 և 2021 թվականների դինամիկաները իրար նկատմամբ, իսկ «Գծապատկեր 4»-ը՝ 2013-ից 2021 թվականների դինամիկաները:



Գծապատկեր 3. Համաշխարհային բանկի տվյալների բազայով Open Banking կիրառող երկրների ATM 100,000 չափահաս մարդու հաշվարկով ցուցանիշի 2013 և 2021 թվականների դինամիկան¹



Գծապատկեր 4. Համաշխարհային բանկի տվյալների բազայով Open Banking կիրառող երկրների ATM 100,000 չափահաս մարդու հաշվարկով ցուցանիշի 2013-ից 2021 թվականների դինամիկան²

¹ Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից «Աղյուսակ 3»-ի ցուցանիշների հիման վրա:

² Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից «Աղյուսակ 3»-ի ցուցանիշների հիման վրա:

Բոլոր դեպքում ակնհայտ է, որ նույնիսկ զարգացած երկրներում կանխիկի պահանջարկը մնում է արդիական՝ հատկապես բաց բանկ(OpenBanking) կիրառող երկրների մոտ: Այս համատեքստում, անկանխիկ վճարումներն առավել խթանելու համար կարևոր է երկրի զարգացվածությունը «բաց բանկի» (OpenBanking) և «բաց ֆինանսների» (OpenFinance) համատեքստում, որը հնարավորություն է տալիս մեկ պատուհան սկզբունքով իրականացնել անձի ցանկացած ֆինանսական գործարք:

Գիտական նորույթ: Վերլուծության արդյունքում հոդվածում նորույթ է դիտված Հայաստանում «Բաց Բանկի» և «Բաց Ֆինանսների» կիրառումը, որը հնարավորություն կտա տարբեր ֆինանսական ծրագրակազմեր և վճարային համակարգեր ինտեգրել մեկ միասնական պատուհանում և այդ կերպ ֆինանսական գործարքներ կատարողին նույնականացնելուց հետո իրականացնել վճարումներ:

Եզրակացություն: Ուսումնասիրության արդյունքում եզրահանգվել է, որ Հայաստանի կանխիկ գործարքները շարունակում են դինամիկ զարգացում ապրել, ինչը պայմանավորված է նվազագույն ծախսերի համար բնակչության կողմից անկանխիկ եղանակով ստացած գումարների կանխիկացման հետ: Բացի այդ, հաշվի առնելով մարդու անձնային վարքն ու հարմարվողականությունը, դեռևս տևական ժամանակ կարող է մնալ կանխիկի օգտագործման սովորույթը, որի կրճատման համար որպես նորույթ առաջարկվում է կիրառել «Բաց Բանկի» և «Բաց Ֆինանսների» գործիքակազմերը: Պակաս կարևոր չի նշել նաև այն հանգամանքը, որ անկանխիկ վճարումների իրականացման զարգացումը դրականորեն է ազդում փողի վերահսկման վրա, ինչն էլ դրամավարկային քաղաքականության արդյունավետության և ֆինանսական կայունության վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բադանյանը Լ. և ուրիշներ, «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», «Զանգակ-97», Երևան 2007թ., 666 էջ:
2. Գասպարյան Լ. Հ., Ատենախոսության սեղմագիր, «Անկանխիկ հաշվարկների արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», Երևան 2019թ., 26 էջ. <https://www.bok.am/sites/default/files/2021-03/%D5%8D%D5%A5%D5%B2%D5%B4%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%2012.12.2019%20%281%29.pdf>:
3. Խուրշուդյան Հ. Բ., «Մակրոտնտեսական կարգավորում», Տնտեսագետ հրատ., Երևան 2002թ., 480 էջ:
4. Հարությունյան Դ.Վ. և Վարժապետյան Ա. Հ., «Թոքենացված վճարամիջոցներով գործառնություններն ու ազդեցությունը դրամավարկային քաղաքականության վրա», «Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում գիտական հոդվածների ժողովածու- 2023, No1», Երևան 2023թ., էջ 34-46, <https://doi.org/10.54503/1829-4324.2023.1-34>
5. Վարժապետյան Ա., «Թոքենացված վճարամիջոցներով գործառնություններն ու ազդեցությունը դրամավարկային քաղաքականության վրա», Մոցիալ-տնտե-

- սական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, No1, Երևան 2023թ., էջ 34-46, <https://doi.org/10.54503/1829-4324.2023.1-34>
6. Տեփոյան Ա., «Վճարահաշվարկային կազմակերպությունների դերը ՀՀ տնտեսությունում», Բանբեր ԵՊՀ, Երևան 2019, 9 էջ, http://www.old.ysu.am/files/07A_Tepoyan.pdf:
 7. Օրդուխանյան Վ., «Փողի շուկա: Բանկային համակարգ և դրամավարկային քաղաքականություն», Տնտեսագետ, Երևան 2004թ., 80էջ:
 8. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, ՀՀ Օրենք Անկանխիկ գործառնությունների մասին, ընդունված 18.01.2022թ., 6 էջ: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=160074>
 9. ՀՀ ՎԿ կայք էջ, վիճակագրություն, տվյալների բազա, ArmStatBank, Էկոնոմիկա և ֆինանսներ, պետական ֆինանսներ, Պետական ֆինանսների հիմնական ցուցանիշներն ըստ ցուցանիշների և տարիների, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_1%20Economy%20and%20finance_14%20Government%20Finances/EF-gf-3.px/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb
 10. ՀՀ ԿԲ կայք էջ, Վճարահաշվարկային համակարգ, Վիճակագրություն և հաշվետվություններ, ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերը, <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx>:
 11. ՀՀ ԿԲ կայք էջ, Վիճակագրություն և հաշվետվություններ, ՀՀ վճարային ենթակառուցվածքը, <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx>
 12. Noah MacDonalda and Brent Evans, A theoretical examination of cash-back credit cards and their effect on consumer spending, Financial Services Review, USA 2020, 223-242 pp., <https://openjournals.libs.uga.edu/fsr/article/view/3428>:
 13. D.V. Harutyunyan & A.H.Varzhapetyan, “The economy development with rational money management at the expense of cash payments”, Alternativ Quarterly Academic Journal #1, Yerevan 2022, 141-149pp., https://www.researchgate.net/publication/361786945_the_economy_development_with_rational_money_management_at_the_expense_of_cash_payments
 14. Novita Umairah & Riko Setya Wijaya, International Journal of Multidisciplinary Research and Literature, Analysis of the effect of non-cash payment transactions on the money supply M1 in Indonesia, pp. 223–242, <https://openjournals.libs.uga.edu/fsr/article/view/3428/3051>
 15. Novita Umairah & Riko Setya Wijaya, International Journal of Multidisciplinary Research and Literature, Analysis of the effect of non-cash payment transactions on the money supply M1 in Indonesia, pp. 818-828, <https://ijomral.esc-id.org/index.php/home/article/view/174/185>
 16. World bank official website, World Development Indicators, <https://databank.worldbank.org/reports.aspx?source=2&series=FB.ATM.TOTL.P5&country=>

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐՈՎ ԿԱՆԽԻԿ ԵՎ ԱՆԿԱՆԽԻԿ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Արշակ Հարությունի Վարժապետյան

Համառոտագիր: Զարգացած երկրներում առավել խրախուսական է գործարքների անկանխիկ եղանակով իրականացումը: Այն պայմանավորված է փողի վերահսկողության հետ, ինչը հնարավորություն է տալիս վերջինիս վերաբերյալ որոշումներ կայացնողներն առավել ճշգրիտ ու արագ արձագանքեն հնարավոր ռիսկերին և գնահատեն ապագա սպասումները: Միջազգային պրակտիկայում մեծ կիրառություն են գտել վճարային քարտերով գործարքների իրականացումը:

Հայաստանում վճարային քարտերի կիրառումը մեծ զարգացում է ստացել վերջին տարիներին, հատկապես օրենսդրական կարգավորումների ու խստացումների արդյունքում: Այնուամենայնիվ դրան համահունչ և խորքային հետազոտությունները մնում են սակավ կամ լավագույն դեպքում բանկերի ու Կենտրոնական բանկի կողմից է իրականացվող ուսումնասիրություններում՝ իրենց իսկ օգտագործման համար: Այս համատեքստում հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀՀ կանխիկ գործարքների դինամիկան և պահանջվածությունն անկանխիկ գործարքների զարգացման համատեքստում: Թեման արդիական է նպատակ ունենալով ցույց տալ Հայաստանում կանխիկ գործառնությունների սահմանափակման արդյունքում անկանխիկ գործառնությունների զարգացման դինամիկան և այդ զարգացման արդյունքում անկանխիկ գործառնությունների հակադարձ ազդեցությունը կանխիկ գործառնությունների սինթեզային աճի վրա: Սույն թեմայի ուսումնասիրության աստիճանը ներկա գերտաքացած անկանխիկ վճարումների գործիքակազմի համատեքստում կարելի է գնահատել թույլ, ինչով էլ պայմանավորված է ուսումնասիրվող թեմայի անհրաժեշտությունը:

Ուսումնասիրության արդյունքում եզրահանգվել է, որ Հայաստանի կանխիկ գործարքները շարունակում են դինամիկ զարգացում ապրել, պայմանավորված է նվազագույն ծախսերի համար բնակչության կողմից անկանխիկ եղանակով ստացած գումարների կանխիկացման հետ: Հաշվի առնելով, դեռևս տևական ժամանակ կարող է մնալ կանխիկի օգտագործման սովորույթը, որի կրճատման համար որպես նորույթ առաջարկվում է կիրառել «Բաց Բանկի» և «Բաց Ֆինանսների» գործիքակազմերը:

Հետազոտության նորույթ է դիտված Հայաստանում «Բաց Բանկի» և «Բաց Ֆինանսների» կիրառումը, որը հնարավորություն կտա տարբեր ֆինանսական ծրագրակազմեր և վճարային համակարգեր ինտեգրել մեկ միասնական պատուհանում և այդ կերպ ֆինանսական գործարքներ կատարողին նույնականացնելուց հետո իրականացնել վճարումներ: Այն ամբողջությամբ **կիրառելի** է ֆինանսական համակարգերում:

Բանալի բառեր. «Բաց Բանկի», «Բաց Ֆինանսների», Վճարային քարտեր, ՀՀ ՉԲ, POS տերմինալ, բանկոմատ, անկանխիկ և կանխիկ գործարք, Համաշխարհային բանկ:

АНАЛИЗ РАЗВИТИЯ НАЛИЧНЫХ И БЕЗНАЛИЧНЫХ ОПЕРАЦИЙ С ПЛАТЕЖНЫМИ КАРТАМИ В АРМЕНИИ

Аршак Арутюнович Варжапетян

Аннотация: В развитых странах выгоднее осуществлять операции безналичным способом. Это связано с контролем денег, который позволяет тем, кто принимает решения относительно последних, точнее и быстрее реагировать на возможные риски и оценивать будущие ожидания. Операции с платежными картами широко используются в международной практике.

Использование платежных карт в Армении значительно расширилось в последние годы, особенно в результате законодательных норм и ограничений. Однако, как бы оно ни развивалось, глубокие исследования в его русле остаются недостаточными или, в лучшем случае, проводятся банками и ЦБ для собственных нужд. В этом контексте целью исследования является изучение динамики и спроса наличных операций РА в условиях развития безналичных операций. Тема актуальна, ведь ее целью является показать динамику развития безналичных операций в результате ограничения наличных операций в Армении и обратное влияние безналичных операций на синтетический рост наличных операций в результате этого развития. Уровень изученности данной темы в контексте нынешнего перегретого инструментария безналичных операций можно оценить как слабый, чем и обусловлена необходимость темы.

В результате исследования сделан вывод, что наличные операции Армении продолжают динамично развиваться, что обусловлено беспрепятственным обналичиванием денежных средств, полученных населением на минимальные расходы. Кроме того, привычка использовать наличные деньги еще может сохраняться в течение длительного времени, и для ее снижения в качестве новизны предлагается использовать инструментарии «Открытого Банка» и «Открытых Финансов».

Использование «Открытого банка» и «Открытых финансов» в Армении рассматривается как новизна исследования, которая позволит интегрировать различное финансовое программное обеспечение и платежные системы в одном общем окне и таким способом производить платежи после идентификации лица, осуществляющего финансовые операции. Это все полностью применимо в финансовых системах.

Ключевые слова: "Открытый Банк", "Открытые Финансы", Платежные карты, ЦБА, POS-терминал, банкомат, безналичные и наличные операции, Всемирный банк.

ANALYSIS OF THE DEVELOPMENT OF CASH AND NON-CASH OPERATIONS WITH PAYMENT CARDS IN ARMENIA

Arshak Harutyun Varzhapetyan

Abstract. In developed countries, the implementation of non-cash transactions is very encouraging. It is due to the control of money, which enables decision-makers to react more accurately and quickly to possible risks and evaluate future expectations. Transactions with payment cards are widely used in international practice.

The use of payment cards in Armenia has developed significantly in recent years, especially as a result of legislative regulations and strictures. However, no matter the rates of development, in-depth research on this issue remains scarce, or at best, research is carried out by banks and the Central Bank for their private use and purposes. **The purpose of the research** is to study the dynamics and demand of RA cash transactions in the context of the development of non-cash transactions. The topic of the research can be assessed as **relevant**, which aims to showcase the dynamics of the development of non-cash operations as a result of the restriction of cash operations in Armenia, and the negative impact of non-cash operations on the synthesis growth of cash operations. The state of the art of this topic in the context of the current overheated non-cash payment toolkit can be assessed as weak, which is why the study is necessary.

Research findings indicate that cash transactions in Armenia continue to experience dynamic development, which is due to the unhindered withdrawal of money received by the population for minimum expenses. Additionally, taking into account the behavioral aspects and adaptability of individuals, the custom of using cash may live on for a long time. For the reduction of cash use, as **a scientific novelty**, it is proposed to use the tools of "Open Bank" and "Open Finances".

The use of "Open Bank" and "Open Finance" in Armenia is considered a research novelty, which will enable to integration of different financial software and payment systems in one single window and thus make payments after identifying the person performing financial transactions. It is fully implementable in financial systems.

Key words: "Open Banking", "Open finance", payment card, CBA, POS terminal, ATM, Non-Cash and cash transaction, World Bank.